



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան



«19» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 245 - 24

Նախաձեռնող՝

«ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ

ք.Երևան, Ֆուչիկի փող. 27/1 բն.28

Գործունեությունը՝

Շողակնի տուֆերի հանքավայրի երևական
«Ամառանոց» տեղամասում 2024-2026 թթ. նախատեսվող
երկրաբանական ուսումնասիրություն
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 245 - 24

«19» նոյեմբերի 2024թ.

Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի երևակման «Ամառանոց» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Շողակն բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի «Ամառանոց» տեղամասում «ՍԵՎԱՐՏ» ՍՊ ընկերությունը նախատեսում է 2024-2026թթ. իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է՝ ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի №06-Ն հրամանի հավելված 2-ի «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման» հրահանգի տեխնիկական պահանջներին համապատասխան: Հայցվող տեղամասի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է:

Նախատեսվող աշխատանքների նպատակն է Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի «Ամառանոց» տեղամասում իրականացնել հետախուզական աշխատանքներ՝ տուֆի պիտանելիությունը որպես երեսապատման և ուղիղ կտրվածքի պատրարի հումք գնահատելու համար:

Նկարագրական մաս. Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Ապարան խոշորացված համայնքի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում, որը հանդիսանում է Շողակնի տուֆերի հանքավայրի հարավ արևելյան շարունակությունը: Ուսումնասիրվող տարածքի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2.76 հա:



Դիտարկվող տարածքում և շրջակայքում բացակայում են աղբյուրները և ջրային հոսքերը, գրունտային ջրերի ներհոսք ևս չեն դիտվել:

Նախատեսվող ործունեության տարածքում սողանքային մարմինները բացակայում են: Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Հայցվող տեղամասի մերձակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել տեղամասի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, դիրքը, երկրաբանական-հետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը:

Տեղանքի ռելիեֆն իրենից ներկայացնում է հարթ մակերևույթ: Հետախուզումն իրականացվելու է մեխանիկական սյունակային եղանակով՝ ուղղահայաց հորատմամբ: Ըստ երկրաբանական բարդության՝ հանքավայրը պատկանում է առաջին խմբի 1գ ենթախմբին այն դիտարկվում է որպես հորիզոնական տեղադրված մարմին: Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզագծերի վրա հորատանցքերի միջև հեռավորությունը A կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 100 – 200 մ: Քանի որ հայցվող տեղամասը չունի կանոնավոր երկրաչափական սահմաններ, ուստի հնարավոր չէ հետախուզական ցանցի սիմետրիկությունը պահպանել: Հորատանցքերը նախատեսվել են այնպես, որ ամբողջ տեղամասը հնարավոր լինի ուսումնասիրել և օգտակար հանածոն առավելագույնս եզրագծել: Հորատման աշխատանքներն իրականացվելու են չորս հետախուզական գծերով, որոնց միջև հեռավորությունը կլինի 71-129 մ: 2-րդ, 5-րդ, 6-րդ և 10-րդ հորատանցքերը հետախուզական գծերի վրա չեն տեղադրվում, սակայն դրանց հորատումը կարևոր նշանակություն է ունենալու տեղամասն ամբողջական ուսումնասիրելու համար: Տեղամասում նախատեսված է հորատել 12 ուղղահայաց հորատանցքեր, յուրաքանչյուրը մինչև 5 մ խորությամբ:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

	X	Y
1	X=8456271.549	Y=4478983.592
2	X=8456221.541	Y=4479003.606
3	X=8456221.639	Y=4479012.352
4	X=8456259.244	Y=4479026.100
5	X=8456350.716	Y=4479120.224
6	X=8456393.976	Y=4479076.161
7	X=8456423.488	Y=4479104.193
8	X=8456380.051	Y=4479148.008
9	X=8456461.554	Y=4479225.413
10	X=8456529.690	Y=4479196.861
11	X=8456474.351	Y=4479138.729
12	X=8456515.630	Y=4479070.000
13	X=8456460.388	Y=4479047.580
1	X=8456271.549	Y=4478983.592

Հորատման աշխատանքները կիրականացվեն ուղղահայաց ուղղությամբ սյունակային հորատումով: Հորատումը կկատարվի 112 մմ տրամագծով կարծր համաձուլվածքի թագիկով: Անհրաժեշտ է ապահովել հանուկի 95% - ից ավելի ելք:

Հորատվելու է 12 ուղղահայաց հորատանցք՝ յուրաքանչյուրը մինչև 5 զձ.մ խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կլինի 60 զձ.մ:



Հորատվող ապարներն, ըստ հորատելիության աստիճանի, համապատասխանում են V և VI կարգերի: Հորատանցքերի տեղադիրքի սխեման բերված է հավելված 2-ում:

Հորատումը կատարվելու է URB 2.5A (Zil-131) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 12 տեղակայում և տեղահանում: Հումքի ինքնարժեքն ու լեռնային զանգվածից բլոկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է իրականացնել տուֆի 100 մ³ ծավալով փորձնական արդյունահանում: Հումքը բլոկների տեսքով տեղափոխվելու է քարի մշակման արտադրամաս, որտեղ արտադրական պայմաններում կատարվելու է հումքի փորձարկում՝ սղոցում և մակերեսի հարթեցում:

Նախատեսվող փորձնական բացահանքն ունենալու է 10x2x5 մ չափեր՝ 10 մետր երկարություն, 2 մ առաջխաղացում և 5 մ բարձրություն (տուֆի շերտի ամբողջ հզորությամբ): Երկրաբանական փաստագրման ենթակա է հորատանցքերի հորատահանուկն ու փորձնական բացահանքը:

Փաստագրման ժամանակ անհրաժեշտ է ամրագրել (արձանագրել, ֆիքսել) ապարի ապարագրական կազմը, ներկառուցվածքը և մակատեսքը, դրանց ճեղքավորվածությունը և անջատելիությունը, հողմահարման աստիճանը, չփոփոխված, մասամբ հողմահարված և հողմահարված ապարների միջև եղած սահմանները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Նախատեսվում է փաստագրել 60 գծ.մ հորատահանուկ և 10 գծ.մ փորձնական բացահանք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից (կետային նմուշ):

Հորատանցքերից ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար վերցվելու են 7-8 սմ երկարությամբ հորատահանուկի սյունիկների փորձանմուշներ՝ այնպես, որ բավականաչափ լինի փորձարկումների լրիվ և կրճատ ծրագրերով ապարանմուշների պատրաստման համար:

Փորձնական բացահանքից վերցվելու է 20x20x20 սմ չափերի կետային (շտուֆային) նմուշ:

Լրիվ ծրագրով փորձարկումների համար հորատանցքերի հորատահանուկից վերցված ապարակտորներից հարկավոր է կտրել միատեսակ ձևի ու չափերի անհրաժեշտ քանակի ապարանմուշներ: Վերջիններիս պատրաստման ժամանակ պետք է ապահովել դրանց երկրաչափական ձևերի ճշտությունը (կանոնավորությունը) և նիստերի մակերևույթների լավ կցահղվումը, քանի որ այդ պայմանների չափահասումը կարող է հանգեցնել քարի ամրության ցուցանիշների չհիմնավորված իջեցմանը:

Տուֆի միներալոգիական-ապարագրական հետազոտությունների և քիմիական կազմի որոշումների համար փորձանմուշները պետք է վերցնել ֆիզիկա-մեխանիկական փորձարկումների համար վերցվող փորձանմուշների հետ միաժամանակ:

Սույն ծրագրի իրականացման համար նախատեսվում է վերցնել 18 նմուշ՝

1. ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար՝ յուրաքանչյուր հորատանցքից մեկական նմուշ (ընդամենը 13 նմուշ),
2. քիմիական կազմի որոշման համար՝ 2 նմուշ,
3. ապարաբանական ուսումնասիրության համար՝ 2 նմուշ:

Մինչև երևակման տեղամասը և տեղամասում ճանապարհների կառուցում և նորոգում չի նախատեսվում, քանի որ դրանք առկա են և բարվոք վիճակում են գտնվում: Չեն կառուցվելու նաև հորատման հարթակներ, քանի որ ռելիեֆը հարթ է, ինչը թույլ է տալիս առանց լրացուցիչ հողային աշխատանքներ կատարելու հորատման հաստոցը տեղադրել և հորատել:

Հիմնական բնապահպանական ռիսկեր ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կարող են հանդիսանալ բուսականության ոչնչացումը, փոքր



արտանետումները՝ հողային աշխատանքների արդյունքում, դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումները, տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկը, ծանր տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքերը, որոնց բացառման, նվազեցման ու փոխհատուցման համար նախատեսվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդը հնարավոր աղտոտող հիմնական նյութեր կարող են լինել փոշին և շահագործվող տեխնիկատրանսպորտային միջոցներից առաջացած ծխագազերը: Փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում՝ հնարավորինս խոնավ եղանակներին և աշխատանքների դադարեցում՝ քամու առկայության դեպքում, չոր եղանակներին գրունտային ճանապարհների վրա մեքենաների երթևեկության առավելագույն արագության սահմանափակում՝ 20 կմ/ժ: Անհրաժեշտության դեպքում ճանապարհների ջրցանում՝ ջրցան մեքենայով չոր եղանակին՝ օրական 2 անգամ, անհրաժեշտության դեպքում կիրառել հակահրդեհային միջոցառումներ:

Ծխագազերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները նախատեսվում է շահագործել սարքին վիճակում, դիզելային շարժիչներով մեքենաների վրա տեղադրել ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներ:

Հայցվող տեղամասի շրջանի հողերը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում, տուֆերի և պեմզային ավազների մակերևույթում մերկացվածությունը տեղանքը դարձրել են անօգտագործելի: Տեղամասի մակերեսն ինտենսիվ հողմնահարված է և էռոզիայով մերկացված: Շատ տեղերում հողային ծածկույթը գրեթե բացակայում է: Հայցվող տեղամասի ռելիեֆը խախտված չէ:

Հողային աշխատանքներ չի նախատեսվում, քանի որ մոտեցման ճանապարհներ և հորատման հարթակներ կառուցելու անհրաժեշտություն չկա: Ռելիեֆը հարթ է, ինչը թույլ է տալիս հորատող հաստոցը առանց նախապատրաստական աշխատանքների տեղակապել: Բացի դրանից տեղամասի մոտ 80%-ը զուրկ է հողաբուսական ծածկույթից:

Աշխատանքային ծրագրով նախատեսված է հայցվող տեղամասում հորատել 12 հորատանցքեր, յուրաքանչյուրը մինչև 5 մ խորությամբ (օգտակար հանածոյի շերտի հաստությունից կախված): Հորատանցքերը հետագայում լցոնվելու են լեռնային զանգվածով:

Հողերի հնարավոր աղտոտում կարող է տեղի ունենալ մեքենաների աշխատանքի ընթացքում յուղերի կամ վառելիքի արտահոսքի հետևանքով: Սակայն դրանք չեն կարող ընդարձակ տեղամասեր աղտոտել: Աղտոտված տեղամասերից հողը անմիջապես կհեռացվի ու կմաքրվի:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ նախատեսվող աշխատանքների տեխնոլոգիայով ջրի արտահոսքեր չեն նախատեսվում: Հորատման աշխատանքներն իրականացվելու են ջրի փակ շրջանառու եղանակով: Հետախուզական աշխատանքների ընթացքում տարածքում բուսական ծածկույթի էական կորուստ չի նախատեսվում, քանի որ տեղամասն արդյունագործական է կենդանական աշխարհի բնադրավայրեր կամ կենսատարածքներ առկա չեն:

Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 004:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տեխնիկական միջոցների աշխատանքների արդյունքում առաջացող լոկալ թրթռումն արողջապահական ռիսկեր չի առաջացնի:



Նախատեսվում է նաև իրականացնել շրջակա միջավայրի ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց վայրի և հաճախականության վերաբերյալ տեղեկությունը տրված է գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Բնապահպանական միջոցառումների (մշտադիտարկումների) համար նախատեսվում է տարեկան առնվազն 150000 հազ. ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Արագածոտնի մարզի Շողակն բնակավայրում անցկացված հանրային լուծումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով գնահատման հաշվետվությամբ ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, զեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջների կատարումը:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի հանքավայրի երևակման «Ամառանոց» տեղամասում 2024-2026 թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան